ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ուղերձը ՀՀ ԳԱԱ նախագահին

Մեծարգո՛ Ռադիկ Մսրտիրոսի,

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը ջերմորեն շնորհավորում է Ձեզ ծննդյան 80-ամյակի առթիվ և ցանկանում քաջառողջություն ու նորանոր հաջողություններ՝ ի փառս հայրենի գիտության, համայն հայության և հայրենիքի:

Արժանավոր հայորդու, բազմաբեղուն գիտնականի, գիտության և կրթության ականավոր կազմակերպչի Ձեր գործունեությունը անմնացորդ նվիրումի, բարձր պատասխանատվության և մարդկայնության փայլուն օրինակ է ներկա և եկող սերունդների համար:

Գիտական հանրությունը և լայն հասարակայնությունը բարձր են գնահատում Ձեր բացառիկ դերը ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի զարգացման բնագավառում, ինչպես նաև Ձեր հսկայական ջանքն ու ներդրումը՝ Երևանի պետական համալսարանը միջազգային կարգի առաջավոր գիտակրթական հաստատություն դարձնելու ուղղությամբ:

Ձեր ղեկավարությամբ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան մեծ հաջողությամբ և պատվով է կատարում հայրենի գիտության առաջատարի, ՀՀ կառավարության գիտական խորհրդատուի իր դերը, գիտության տարբեր ոլորտներում արձանագրած ձեռքբերումներով տարեցտարի ավելի ու ավելի բարձր համարում է ձեռք բերում տարածաշրջանում և միջազգային գիտական շրջանակներում:

Թանկագի՛ն հոբելյար, անուրանալի է Ձեր նվիրումը գիտության հիմնախնդիրների լուծման, գիտական բարձրորակ կադրերի պատրաստման, Հայաստանում. հիմնարար գիտության շարունակական զարգացման ազգաշահ գործին: Առինքնող է գիտնականի, գիտության և կրթության հմուտ կազմակերպչի Ձեր մարդկային կերպարը, ոգևորիչ են մարդկանց, աշխատակիցների նկատմամբ ձեր հոգատարությունը և սրտացավությունը, մարդկային հարաբերություններին Ձեր հաղորդած ջերմությունը:

Մեզ համար առանձնապես գնահատելի են հայագիտության, նաև հայերենագիտության զարգացման նկատմամբ Ձեր հոգածու վերաբերմունքը, Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գործունեությունը ավելի արդյունավետ դարձնելուն միտված Ձեր ջանքերն ու աջակցությունը:

Սիրելի՛ Ռադիկ Մարտիրոսի, վստահ ենք, որ Ձեր ղեկավարությամբ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան կունենա նորանոր ձեռքբերումներ, Ձեզ մաղթում ենք անսպառ ուժ և եռանդ, արնշատություն: